

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

Հաստատում եմ  
Տնօրեն [Ստորագրություն] Դ. Կոստանյան  
«31» 08 2022թ.



ԽՄԲԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ (ՆԵՐԻ) ԱՆՎԱՆՈՒՄԸ Տեխնոլոգիա (աղջիկներ)  
ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ Ցուրջեր: Դերձակի մասնագիտական հիմունքներ

ԾՐԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿ Կարինե Արզումանյան

Քննարկվել, հավանության է արժանացել «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի 31.08.2022 նիստում: Արձանագրություն թիվ 1:

Քննարկվել, հավանության է արժանացել Քննարկում է Կարինե Արզումանյան առարկաններ

մեթոդախափորման 25.08.2022 նիստում: Արձանագրություն թիվ 1:

Մեթոդախափորման նախագահ [Ստորագրություն] Դաջունց Ա.  
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ [Ստորագրություն] Ավանեսյան Ս.  
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Մաս. կրթմ աջակցության գծով գծով տնօրենի տեղակալ [Ստորագրություն] Գևորգյան Ա.  
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

2022թ.



**ԽՄԲԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ**

Այս ծրագիրը նախատեսված է աշակերտների մոտ ձևավորելու գիտելիքներ ֆուրջերի տեսակների, նախապատրաստման և կազմակերպման առանձնահատկությունների մասին: Ձևավորել աշակերտների մոտ ֆուրջետների կազմակերպման կարողություններ և հմտություններ:

Աշակերտի մոտ ձևավորել հագուստի նյութերի, հագուստի մոդելավորման և նախագծման, հագուստի պատրաստման վերաբերյալ անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ:

Աշակերտին գիտելիքներ տալ երկրաչափական, բուսական և կենդանական զարդանախշերի վերաբերյալ, զարգացնել զարդանախշը թղթի վրա տեղադրելու, զարդանախշի գծային և գունային պատկերները տարբերակելու և կրկնօրինակելու, տեխնիկական նկարի հաշվարկման և նախագծման կարողություններ:

Աշակերտի մոտ ձևավորել պարզ գիտելիքներ հայկական և տարբեր ազգերի ավանդական հացատեսակների և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ:

**ԽՄԲԱԿԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Շաբաթական 1 դասաժամ, ընդհանուր՝ 68 դասաժամ

**ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Այս դասընթացն ուսումնասիրելուց հետո աշակերտը պետք է

1. Իմանալ ինչ է ֆուրջերը, կարողանալ համադրել սփրոցը և սպասքը: Կատարել սննդամթերքի ընտրման, մշակման և պահպանման աշխատանքներ
2. Իմանալ կանապեները, սառը խորտիկների նախապատրաստումն ու ձևավորումը
3. Իմանալ դեկորացիաների, խմիչքների, աղանդեղենի հրուշակեղենի, խմորեղենի ձևավորումը, կազմակերպել ֆուրջեր:
4. Ներկայացնել դերձակի զբաղմունքի նկարագիրը, անհատական և մեքենայական արտադրամասում պարապմունքի կազմակերպման առանձնահատկությունները:
5. Ներկայացնել կարի արտադրության գործում կիրառվող գործվածքների, լրացուցիչ նյութերի, ֆուրնիտուրայի հատկությունները, դրանց օգտագործման բնագավառները:
6. Ներկայացնել մարդու մարմնի չափային հատկանիշները, կատարել մարդու մարմնի չափում:
7. Ներկայացնել հագուստի նախագծման սկզբունքները:
8. Տեղադրի զարդանիշը թղթի վրա:
9. Տարբերակի և պատկերի երկրաչափական, բուսական և կենդանական զարդանախշերը:
10. Հաշվարկի տեխնիկական նկարի չափսերը:
11. Կատարի զարդանախշի տեխնիկական նկար:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ ինչ է ֆուրջերը, կարողանալ համադրել սփրոցը և սպասքը: Կատարել սննդամթերքի ընտրման, մշակման և պահպանման աշխատանքներ:**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

1. Ճիշտ է ներկայացնում ֆուրջերը և դրա կազմակերպման տեսակները
2. Կարողանում է ճիշտ համադրել, գործածել սփրոցները և սպասքը՝ կախված սեղանի դիրքից և ձևից
3. Ճիշտ է շահագործում գործիքները և դանակները
4. Կարողանում է ճիշտ ընտրել և նախնական մշակման ենթարկել սննդամթերքները
5. Կատարում է պիտանելիության ժամկետների ստուգում և մթերքների պահպանում:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Աշակերտին կառաջադրվի ներկայացնել ֆուրջեր կազմակերպելու արվեստը, դրա կազմակերպման տեսակները, համադրել, գործածել սփրոցը, սպասքադրել կախված սեղանի դիրքից և ձևից, շահագործել գործիքները և դանակները, ընտրել, նախնական մշակման ենթարկել, մթերքները,



կատարել պիտանելիության ժամկետների ստուգում և մթերքների պահպանում:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, խոհանոցային պարագաներ, գործիքներ և սպասք:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում 1 ժամ  
 Գործնական ուսուցում 5 ժամ

Հ/Հ	ԹԵՄԱ	ԸՆԴՀ.	ՏԵՍ.	ԳՈՐԾ.
1.1	Ֆուրշերը և դրա կազմակերպման տեսակները	1	1	
1.2	Սփրոցների, գործածումը՝ կախված սեղանի դիրքից և ձևից	1		1
1.3	սպասքի համադրումը, գործածումը՝ կախված սեղանի դիրքից և ձևից	1		1
1.4	Գործիքները և դանակները	1		1
1.5	Սննդամթերքների պիտանելիության ժամկետները,	1		1
1.6	Սննդամթերքների ընտրումն ու նախնական մշակումը	1		1

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ կանապեները, սառը խորտիկների նախապատրաստումն ու ձևավորումը ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇՆԵՐ**

1. Ընտրում և ձևավորում է կանապեները
2. Կարողանում է կանապեները ճիշտ համադրել համապատասխան սննդամթերքի հետ
3. Ընտրում և ձևավորում է սառը խորտիկները
4. Կարողանում է սառը խորտիկները ճիշտ համադրել համապատասխան սննդամթերքի հետ

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքի հիման վրա: Աշակերտին կառաջադրվի ընտրել և ձևավորել կանապեները, ճիշտ համադրել համապատասխան սննդամթերքի հետ, ձևավորել սառը խորտիկները, ճիշտ համադրել համապատասխան սննդամթերքի հետ:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների միջոցով: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ խոհանոցային պարագաներ, գործիքներ և համապատասխան սննդամթերք:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում 2 ժամ  
 Գործնական ուսուցում 4 ժամ

Հ/Հ	ԹԵՄԱ	ԸՆԴՀ.	ՏԵՍ.	ԳՈՐԾ.
2.1	Կանապեներ	1	1	
2.2	Սառը խորտիկներ	1	1	



2.3	Կանապենների ընտրումն ու ձևավորումը	1		1
2.4	Մանդամթերքի հետ կանապենների համադրությունը	1		1
2.5	Սառը խորտիկների ընտրումն ու ձևավորումը,	1		1
2.6	Մանդամթերքի հետ սառը խորտիկների համադրությունը	1		1

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ դեկորացիաների, խմիչքների, աղանդեղենի հրուշակեղենի, խմորեղենի ձևավորումը, կազմակերպել ֆուրշեթ:**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

1. կարողանում է ձևավորել հրուշակեղենը
2. կարողանում է ճիշտ ընտրել դեկորացիաները, դասավորել և համադրել ըստ գույների
3. կարողանում է ճիշտ ընտրել խմիչքները, ձևավորել և համադրել ընտրելով համապատասխան սպասքը
4. կարողանում է ճիշտ ձևավորել պանիրները, երշիկեղենը, ձիթապտուղը, թթուները, ձկնկիթը, խմորեղենը, կոնֆետները, ընդեղենը, չրեղենը
5. կազմակերպում է ֆուրշեթ

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքի հիման վրա: Աշակերտին կառաջադրվի ձևավորել հրուշակեղենը, ճիշտ ընտրել դեկորացիաները (անձեռոցիկներ, մումեր, ծաղիկներ), դասավորել և համադրել ըստ գույների, ընտրել խմիչքները, ձևավորել և համադրել ընտրելով համապատասխան սպասքը, կազմակերպել ֆուրշեթ:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների միջոցով: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ խոհանոցային պարագաներ, գործիքներ և համապատասխան սննդամթերք:

**ՌԵՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական ուսուցում 12 ժամ

Հ/Հ	ԹԵՄԱ	ԸՆԴՀ.	ՏԵՍ.	ԳՈՐԾ.
3.1	Հրուշակեղենի ձևավորումը, դասավորումն ու համադրումը	1		1
3.2	Դեկորացիաների ընտրությունը, դասավորումն ու համադրումը	1		1
3.3	Խմիչքների ընտրությունը, ձևավորումն ու համադրումը	1		1
3.4	Պանիրների ձևավորումը	1		1
3.5	Երշիկեղենի ձևավորումը	1		1
3.6	Ձիթապտղի ձևավորումը	1		1
3.7	Թթուների ձևավորումը	1		1
3.8	Ձկնկիթի ձևավորումը	1		1
3.9	Կոնֆետների ձևավորումը	1		1
3.10	Ընդեղենի ձևավորումը	1		1
3.11	Չրեղենի ձևավորումը	1		1
3.12	Խմորեղենի ձևավորումը	1		1

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ներկայացնել դերձակի զբաղմունքի նկարագիրը, անհատական և մեքենայական արտադրամասում պարապմունքի կազմակերպման առանձնահատկությունները**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**



1. ճիշտ է ներկայացնում դերձակի զբաղմունքի նկարագիրը,
2. ճիշտ է կահավորում աշխատատեղն այնպես, որ օգտագործվող պարագաները չխանգարեն պարապմունքային գործընթացին,
3. տարբերակում է կարի արտադրամասի սարքավորումների տեսակները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի հիման վրա: Աշակերտը պետք է ճիշտ ներկայացնի դերձակի զբաղմունքը, բնութագրի կարի արտադրամասի սարքավորումների տեսակները, ճիշտ կահավորի դերձակի աշխատատեղը, անհարաժեշտ պարագաները և գործիքները: Ստորև բերվում են դերձակի զբաղմունքի որոշ մանրամասներ.

- Հագուստի կարում տարբեր գործվածքներից և նյութերից
- Պատվիրած հագուստի նորոգում և ձևափոխում
- Աշխատատեղի կահավորում համապատասխան սարքավորումներով և պարագաներով, սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում
- Մեքենաների աշխատանքային վիճակի ապահովում

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ**

Արդյունքի ձեռքբերումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքի ձևով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, կարի մեքենաների պլակատներ, դերձակի աշխատատեղի կահավորման անհրաժեշտ գործիքներ, պարագաներ:

**ՌԵՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում 1 ժամ  
 Գործնական ուսուցում 4 ժամ

Հ/Հ	ԹԵՄԱ	ԸՆԴՀ.	ՏԵՍ.	ԳՈՐԾ.
4.1	Դերձակի զբաղմունքի նկարագիրը	1	1	
4.2	Կարի արտադրամասի գործիքները և պարագաները	1		1
4.3	Կարի արտադրամասի սարքավորումները	1		1
4.4	Աշխատատեղի կահավորում համապատասխան սարքավորումներով և պարագաներով, սանիտարահիգիենիկ պարագաների ապահովում	1		1
4.5	Մեքենայի աշխատանքային վիճակի ապահովում	1		1

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Ներկայացնել կարի արտադրության գործում կիրառվող գործվածքների, լրացուցիչ նյութերի, ֆուրնիտուրայի հատկությունները, դրանց օգտագործման բնագավառները**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇՆԵՐ**

1. տարբերում է քիմիական, բնական, մանրաթելերից պատրաստված գործվածքները,
2. ճիշտ է ներկայացնում գործվածքների համեմատական բնութագրերը,
3. ճիշտ է ներկայացնում լրացուցիչ նյութերի, ֆուրնիտուրայի օգտագործման բնագավառներն ու սկզբունքները,
4. մոդելին համապատասխան՝ ճիշտ է ընտրում գործվածքը՝ հաշվի առնելով նորաձևության պահանջը,
5. մոդելին համապատասխան՝ ճիշտ է ընտրում օժանդակ նյութերը և ֆուրնիտուրան:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**



Գորիսի Յու. Բախյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց

Արդյունքի յուրացումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքների հիման վրա: Աշակերտին կտրվի նախորոք կազմված հարցաշար գործվածքների տեսակների, բնական և քիմիական մանրաթելերից պատրաստված գործվածքների և դրանց համեմատության, գործվածքներն ըստ մանրաթելային բաղադրության, նշանակության և դրանց հիմնական հատկությունների վերաբերյալ: Աշակերտին տրվում են տարբեր գործվածքների նմուշներ: Նա պետք է ճիշտ տարբերի գործվածքները ըստ մանրաթելային բաղադրության, բնութագրի այն ըստ նշանակության: Տրված մոդելի էսքիզին համապատասխան ճիշտ ընտրի գործվածքը և լրացուցիչ նյութերը: Ստորև բերվում են գործվածքների հիմնական հատկությունները, որոնք անհրաժեշտ են հաշվի առնել նախագծման, ձևման, կարման հետագայում նաև կրման ժամանակ.

- Մեխանիկական հատկություններ-ամրություն, ծալազարդարում, ճնշվելիություն, մաշակայունություն և այլն,
- Ֆիզիկական հատկություններ - ջերմապաշտպանիչ, օդաթափանց և այլն,
- Տեխնոլոգիական հատկություններ - սահունություն, թելերի թափվելիություն, մտնելիություն և այլն:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ**

Արդյունքի ձեռքբերումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքի ձևով: Ռեսուրսման համար անհրաժեշտ է ունենալ տարբեր գործվածքների նմուշներ, մոդելների ուրվանկարներ, տարբեր նշանակության հագուստներով: Մասնագիտական գրականություն, գործնական պարապմունքի համար անհրաժեշտ պարագաներ:

**ՌԵՍՈՒՐՑՄԱՆ ԵՐԱՇՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում 6 ժամ  
 Գործնական ուսուցում 5 ժամ

Հ/Հ	ԹԵՄԱ	ԸՆԴՀ.	ՏԵՍ.	ԳՈՐԾ.
5.1	Գործվածքների տեսակները	1	1	
5.2	Բնական և քիմիական մանրաթելերից պատրաստված գործվածքները	1	1	
5.3	Բնական և քիմիական մանրաթելերից գործվածքների համեմատական բնութագրերը	1	1	
5.4	Գործվածքները ըստ մանրաթելային բաղադրության և նշանակության	1	1	
5.5	Գործվածքի հիմնական հատկությունները	1	1	
5.6	Գործվածքի մեխանիկական հատկությունները	1		1
5.7	Գործվածքի ֆիզիկական հատկությունները	1		1
5.8	Գործվածքի տեխնոլոգիական հատկությունները	1		1
5.9	Լրացուցիչ նյութերի օգտագործման բնագավառներն ու սկզբունքները	1	1	
5.10	Ֆուրնիտուրայի օգտագործման բնագավառներն ու սկզբունքները	1		1
5.11	Նորաձևության պահանջներին համապատասխան գործվածքի ընտրությունը	1		1

**ԱՐԴՅՈՒՆՔ 6. Ներկայացնել մարդու մարմնի չափային հատկանիշները, կատարել մարդու մարմնի չափում**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇՆԵՐ**

1. ճիշտ է օգտվում մարմնակազմության չափումների տիպային աղյուսակից,
2. ըստ նմուշի ճիշտ է կատարում մարդու մարմնի չափումները,



3. ճիշտ է կատարում համապատասխան հաշվարկները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքների հիման վրա: Աշակերտին կտրվի նախորոք կազմված հարցաշար մարդու մարմնի չափումների և չափային հատկանիշների, մարդու մարմնի չափման համար անհրաժեշտ պարագաների կիրառումների, չափումներից կախված գործվածքի գնահատման, պատվերի ուրվագծման, աղյուսակից օգտվելու վերաբերյալ: Աշակերտին կտրվի մարմնակազմության չափումների տիպային աղյուսակ: Նա պետք է ճիշտ կատարի մարդու մարմնի չափումները և համապատասխան հաշվարկները: Ստորև բերվում են մարմնակազմության չափումների վերաբերյալ որոշ մանրա-մասներ.

- որպես կանոն չափումները կատարվում են ներքին սպիտակեղեն կամ նուրբ ընդգրկված շրջազգեստ հագած,
- խիստ հորիզոնական դիրքով, գոտկագծի վրա քուղ կամ բարակ երիզ կապած
- Չափերը վերցնելիս , չափող ժապավենը պետք է կիպ ընդգրկի մարմինը առանց ձգման:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, գործնական առաջադրանքների կատարումը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մարմնակազմության չափման աղյուսակներ, մանեկեններ, տարբեր տեսակի քանոններ, սանտիմետրաժապավեն և այլն:

**ՌԵՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում 3 ժամ  
 Գործնական ուսուցում 7 ժամ

Հ/Հ	ԹԵՄԱ	ԸՆԴՀ.	ՏԵՍ.	ԳՈՐԾ.
6.1	Մարմնակազմության չափումների տիպային աղյուսակը	1	1	
6.2	Մարդու մարմնի չափումը	1	1	
6.3	Տիպային աղյուսակից օգտվելը	1		1
6.4	Մարդու մարմնի չափումը ուսային հագուստի համար	1		1
6.5	Մարդու մարմնի չափումը գոտկային հագուստի համար	1		1
6.6	Մարմնակազմության չափումներն ու հատկանիշները	1	1	
6.7	Մարդու մարմնի չափների գրառումը	1		1
6.8	Մարդու մարմնի չափման համար անհրաժեշտ պարագաների ընտրությունը և կիրառումը	1		1
6.9	Չափումներից կախված գործվածքի գնահատումը և նախնական ուրվագծումը	1		1
6.10	Մարդու մարմնի չափումը և համապատասխան հաշվարկն ու գրառումը	1		1

**ԱՐԴՅՈՒՆՔ 7. Ներկայացնել հագուստի նախագծման սկզբունքները**

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇՆԵՐ**

1. ճիշտ է ներկայացնում հագուստի զարգացման պատմությունը,
2. ճիշտ է ներկայացնում հագուստի նախագծման հիմնական սկզբունքները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը կատարվում է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքների հիման վրա: Աշակերտին կտրվի նախորոք կազմված հարցաշար էսքիզ հասկացության, դրանց կատարման



վերաբերյալ, կառաջարկվի թվարկել պատվիրատուի մարմնակազմության առանձնահատկությունները և համեմատել մարմնակազմության չափային հատկանիշերի հետ: Աշակերտին կառաջարկվի օգտվել մարմնակազմության չափումների տիպային աղյուսակից, կատարել մարդու մարմնի չափումներ, համապատասխան հաշվարկներ: Ստորև բերվում են որոշ մանրամասներ հագուստի նախագծման հիմնական սկզբունքների վերաբերյալ.

- Պատվիրատուի չափումների ճիշտ կատարում, հաշվի առնելով մարմնակազմական առանձնահատկությունները,
- Համեմատում մարմնակազմության չափսային հատկանիշների հետ,
- Հաշվարկների կատարում՝ հաշվի առնելով ազատ նստեցման հավելումները,
- Կոնստրուկտիվ տեղամասերի նշում:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ**

Արդյունքի ձեռքբերումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքի ձևով: Անհրաժեշտ է ունելլալ մասնագիտական գրականություն, նորաձևության ամսագրեր, պլակատներ, մոդելների ուրվանկարներ:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Տեսական ուսուցում 3 ժամ  
 Գործնական ուսուցում 5 ժամ

Հ/Հ	ԹԵՄԱ	ԸՆԴՀ.	ՏԵՍ.	ԳՈՐԾ.
7.1	Հագուստի զարգացման պատմությունը	1	1	
7.2	Հագուստի նախագծման սկզբունքները	1	1	
7.3	Պատվիրատուի չափումները	1		1
7.4	Պատվիրատուի մարմնակազմության առանձնահատկությունները	1		1
7.5	Մարմնակազմության չափային հատկանիշերը	1	1	
7.6	Ազատ նստեցման հավելումները	1		1
7.7	Հագուստի կարաբաժինը	1		1
7.8	Կոնստրուկտիվ տեղամասերի նշումը	1		1

**ԱՐԴՅՈՒՆՔ 8. Չարդանախշը տեղադրել թղթի վրա  
 ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇՆԵՐ**

1. Ճիշտ է նշում զարդանախշի դիրքը և տեղը թղթի վրա,
2. Ճիշտ է կատարում զարդանախշի դիրքը և տեղը,
3. Ճիշտ է կատարում զարդանախշի գունավորումը ըստ գունատեսության սկզբունքների:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարությունների հիման վրա: Աշակերտին հանձնարարվելու է որոշել զարդանախշի դիրքը և տեղը վատման թղթի վրա և գունավորել զարդանախշը՝ պայմանական գույներով: Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե աշակերտը ճիշտ է պահպանում զարդանախշի համաչափությունը և ընդհանուր առմամբ գործնական առաջադրանքները կատարում է հիմնականում անսխալ:

**ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ**

Արդյունքի ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, նյութեր և թելեր:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական ուսուցում 2 ժամ

Հ/Հ	ԹԵՄԱ	ԸՆԴՀ.	ՏԵՍ.	ԳՈՐԾ.
8.1	Չարդանախշի դիրքը և տեղը	1		1





8.2	Զարդանախշի գունավորումը ըստ գունատեսության սկզբունքների	1		1
-----	---	---	--	---

**ԱՐԴՅՈՒՆՔ 9. Տարբերակել և պատկերել երկրաչափական, բուսական և կենդանական զարդանախշերը  
ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇՆԵՐ**

1. Ճիշտ է տարբերակում և պատկերում երկրաչափական զարդանախշերը,
2. Ճիշտ է տարբերակում և պատկերում բուսական զարդանախշերը,
3. Ճիշտ է տարբերակում և պատկերում կենդանական զարդանախշերը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարությունների հիման վրա:

Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է մշակել և պատկերել հանձնարարված զարդանախշերը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն և տարբեր զարդանախշերի պատկերներով նկարներ և նկարչական նյութեր:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական ուսուցում 3 ժամ

Հ/Հ	ԹԵՄԱ	ԸՆԴՀ.	ՏԵՍ.	ԳՈՐԾ.
9.1	Երկրաչափական զարդանախշերը	1		1
9.2	Բուսական զարդանախշերը	1		1
9.3	Կենդանական զարդանախշերը	1		1

**ԱՐԴՅՈՒՆՔ 10. Հաշվարկել տեխնիկական նկարի չափսերը  
ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇՆԵՐ**

1. Ճիշտ է հաշվարկում գորգի լայնությունը և հենքի թելերի զույգերի քանակը,
2. Ճիշտ է հաշվարկում գորգի երկարությունը՝ հաշվի առնելով միջնաթելերի շարքերի քանակը,
3. Ճիշտ է որոշում գորգի խտությունը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական պարապմունքների միջոցով աշակերտը պետք է ճիշտ հաշվարկի գորգի չափսերը:

Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե աշակերտը հիմնականում ճիշտ է կատարում տրված առաջադրանքը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Արդյունքի յուրացումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, տեխնիկական նկար՝ հատուկ գորգի համար նախատեսված վանդակավոր թուղթ, թելերնայութեր:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական ուսուցում 3 ժամ

Հ/Հ	ԹԵՄԱ	ԸՆԴՀ.	ՏԵՍ.	ԳՈՐԾ.
10.1	Գորգի լայնությունը և հենքի թելերի զույգերի քանակը	1		1
10.2	Գորգի երկարությունը՝ հաշվի առնելով միջնաթելերի շարքերի քանակը	1		1
10.3	Գորգի խտությունը	1		1

**ԱՐԴՅՈՒՆՔ 11. Կատարել զարդանախշի տեխնիկական նկար  
ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇՆԵՐ**



1. Ճիշտ է փոխանցում զարդանախշը տեխնիկական թղթի վրա,
2. Ճիշտ է կատարում զարդանախշի պայմանական գունաբաժանումը տեխնիկական թղթի վրա:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով, աշակերտը պետք է զարդանախշը, թափանցիկ թղթի օգնությամբ, տեղափոխի վանդակավոր թղթի վրա և մշակի այն:  
 Արդյունքի յուրացումը համարվում է դրական, եթե առաջադրանքը հիմնականում կատարվել է անսխալ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ**

Արդյունքի յուրացումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ թափանցիկ և վանդակավոր թուղթ, պատրաստի զարդանախշերի պատկերներ և համապատասխան նյութեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ**

Գործնական ուսուցում 2 ժամ

Հ/Հ	ԹԵՄԱ	ԸՆԴՀ.	ՏԵՍ.	ԳՈՐԾ.
11.1	Զարդանախշի փոխանցումը տեխնիկական թղթի վրա	1		1
11.2	Զարդանախշի պայմանական գունաբաժանումը տեխնիկական թղթի վրա	1		1

